



Հարգելի փաստաբաններ,

«Փի-ԷյՋ Ինթերնեշնլ» ամերիկյան կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ Պետդեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության միջազգային բյուրոյի կողմից ֆինանսավորվող «Համայնքային կապեր և նախաձեռնություններ» (ՀԿՆԻՍ) ծրագրի շրջանակներում հրավիրում է մասնակցելու անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված մասնագետների վերապատրաստման, կարողությունների հզորացման և դատաիրավական բարեփոխումների շրջանակում Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն համակարգի ներդրմանն ուղղված պետական աշխատանքներին աջակցության թեմայով դասընթացի:

Դասընթացը տեղի է ունենալու 2014թ. ապրիլի 15-ին և 16-ին, ժամը 10:30, հասցե՝ ք. Երևան, «Կոնգրես» հյուրանոց: Դասընթացի ընթացքում ԱՄՆ-ի ճանաչողական ծրագրին մասնակցած 3 հայ մասնագետներ՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուզաննա Բարսեղյանը, իրավագիտության դասախոս, նախկին դատախազ՝ Արթուր Ղամբարյանը, և փաստաբան՝ Ինեսսա Պետրոսյանը, ԱՄՆ-ից հրավիրված 2 ամերիկացի մասնագետների գլխավորությամբ, իրենց ձեռք բերած նոր տեղեկությունն ու գիտելիքները կփոխանցեն 30 հայ այլ մասնագետների (10 դատավոր, 10 դատախազ և 10 փաստաբան):

Դասընթացին գրանցվելու առաջնահերթություն է տրվելու անչափահասների վերաբերյալ գործերով զբաղվող 10 փաստաբաններին և այն փաստաբաններին, ովքեր նախկինում արդեն մասնակցել են անչափահասների գործերի վերաբերյալ անցկացվող նմանատիպ դասընթացների:

Գրանցվելու համար կարող եք դիմել մինչև 2014թ. ապրիլի 11-ը ներառյալ:

Դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք նամակ ուղարկել ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով համակարգող Անի Ղարիբյանին ani.gharibyan@advocates.am էլ. հասցեով՝ նշելով Ձեր արտոնագրի համարը, հեռախոսահամարը և Ձեր մասնակցությամբ անչափահասների գործերի վերաբերյալ տեղեկություններ:

Բեռնել օրակարգը

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```